


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարինյ համար	12 ֆր.
սարկիսի վեցամսյա	7 "
Արսասահմանի համար սարկիսի	15 ֆր.
վեցամսյա	8 "
Ավերիկայի համար	3 ֆր.
սարկիսի վեցամսյա	1.50 "

Մանուգրան տղր սուրբին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեսին սուրբին սանթիմներու համար 20 0/0 զեղք կըլաւ:

Վառնայի համար ձեռք 40 սանթիմ է



ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՈՒՆ. ԲԱՆՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ ԲԱՎՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ԵԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯЪ

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարինյ համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ Արսասահմանի համար ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեն տրուի

R. P. Kalémcarian Mechitaristengasse W. 4. Vienne

«Шаржумъ» Варна

ՎԵՐՋԱՊԵՍ

—)0(—

Դ.

«Երբ բացատրում ենք առաջնորդների անհրաժեշտութիւնը պէտք է որ ձգտենք առաջուց նրանց ուղեղներում կեդրոնացած գիտութիւնները լուծել ամբողջի ուղեղում. իսկ դրա համար միայն մի միջոց կայ—այն՝ անդադար առաջ գնալ և ամբողջին ստիպել հետաքրքրվել այն հարցերով որոնք հետաքրքրում են մեզ»:

«Ամեն մի անկուրս խելքի տէր մարդ որ ձգտում է իր իդէալի իրականացման միջոց պէտք է անհասկնալիորէն զարհուրեցնէ այն մարդկանց, որոնք հետեւում են հին ունակութեանց, (ուսման) և միշտ այս վերջինները պիտի հալածեն առաջինին»:

«Անկասկած մենք շատ ուրախ կը լինեինք որ ընկերային բարեշրջումը կատարվէր գանգաղորէն. անընդհատ և առանց ցնցումների. բայց այդ մեզինչ չէ կախված. մենք իբրև դիօ պականդիստներ քարոզում ենք ընկերութեան վերանորոգման գաղափարներ, լուծելով մեր խնդիրը, իսկ այդ գաղափարները կազմում են այն կաթիլը որը թափանցում է քարի մէջ, ծակում զայն, և իրեն համար ճամբա բացում ժայռի տակը. կարող ենք մենք այդ ժայռին արգիլել որ չը փլչի, իր հետ միասին տանելով բոլոր այն նեցուկները որը դուք գրել էիք մայրը հաստատուն պահելու համար»:

«Միթէ՞ ու է բանի մէջ հաստատ համոզված մարդը չի ձգտում իր համոզումները քարոզել և ներմուծել կեանքի մէջ, Միթէ՞ գաղափարի ճշմարտութեան մէջ լիովին համոզված մարդը կարող է չը ջանալ համոզել ուրիշներին, մանաւանդ չը ջանալ զայն իրականացնել համաձայնեցնելով իր անձնական կեանքի հետ. Եւ ներկայ ընկերութեան կեանքի մէջ նոր գաղա

փարների ներմուծումը ի՞նչ է, եթէ ոչ յեղափոխութիւն. ի՞նչ պէս էք ուզում որ նոյն մարդիկ, որոնք իրենց ձեռքից եկած ամեն բան արել են նոր գաղափարներ սարածելու համար, ջանացել են ցոյց տալ ընկերային շարիքների պատճառները և նրանց բառնալու միջոցները, ջանացել են գծել լաւ ապագայի իդէալը, կտրէին ճամբան նրանց որոնք ձգտում են այդ գաղափարները գործնականի վերածել, ասելով սրանց. «Նորունակեցէք հիմա իլ ապագայ երջանկութեան հեռանկարով, շարունակեցէք տանջվել, զինվեցէք համարներով, երբ և ինչէն ձեզ շահագործողները, ու է զիջում կանեն ձեզ»:

«Բաւ է ինչքան մարդիկ խոնարհվեցին իշխանութիւն ունեցողների առջեւ, բաւ է ինչքան փրկութիւն ուզածները վերեն զրկված անձերից... մեր գաղափարները իրականացնելու համար պէտք են գիտակից մարդիկ, իրենց կարողութիւնը ըմբռնող, ընդունակ ստիպելու, յարգելու իրենց ազատութիւնը միեւնոյն ժամանակ ուրիշների համար բանակալ չը դարձող մարդիկ, որոնք միայն իրենց անձի իրենց անձնական նախաձեռնութեան և կորովի վրա յոյս դնող մարդիկ են: Իսկ այդ տեսակ մարդիկ երեւան կը գան այն ժամանակ միայն երբ մենք կը քարոզենք ոչ թէ հաշտութիւն պոյութիւն ունեցածի հետ, այլ ընդհակառակը բողոք նրա դէմ»:

«Ով լիովին համոզված է ու է գաղափարի ճշմարտութեան մէջ, անկարող է չը ջանալ տարածել զայն, չը ներմուծել կրեանքի մէջ»:

«Ի՞նչու արեւելիները այնքան շատ, զրկանքները այնքան ծանր, հալածանքները այնքան ուժեղ են, որ մենք լիովին ըմբռնում ենք թէ գաղափարների, որոնք մենք ճշմարտ և արդարացի ենք համարում, տարածման գործի մէջ զանազան աստի

ճաններ պէտք է գոյութիւն ունենան...

«Յաճախ ձեզ կը կասեցնեն զանազան մտածումներ վերաբերող ընտանիքի, շրջակայքի միջավայրին, անհրաժեշտ մի կտոր հացից չը զրկվելուն, բայց այդ մտածումների ուժը որչափ էլ որ զօրեղ լինի, եթէ մարդ իրօք համոզված է, նրանք չեն կարող ստիպելու հաշտվել աշխատանքում կատարված բոլոր անճշտութիւնների հետ, կը հասնի մի վայրկեան երբ դուք այդ ամէնը մի կողմ կը նետէք և կը մտաբերէք միայն մի բան—թէ դուք մարդ էք, թէ երազել էիք աւելի լաւ բան. քան այն որին այսօր տոկում էք»:

(Մեռնող Ընկերութիւնը և Անիշխանութիւնը. գրքից) Ժ. Լ. ԳՐԻՍԻ

Ոչ մի գիտակից յեղափոխական կարող է յեղափոխական մարմնի մէջ մտնել առանց այս հիմունքների և դաւանանքի. իր յեղափոխական պրօպագանդան հաստատուն հիմքի վրա դնելու համար. Ես իմ պայքարը Դաշնակցութեան մէջ տիրող ստատէի. կարգերի և այդ միջոցներով կազմակերպութիւնը շահագործողների դէմ սկսած եմ այս հիմքերով ղեկավարված. ինչպէս նախորդ յօդուածում յայտնեցի, ես ներկայանում եմ բացարձակ բմբոստ, պայքարող, կազմակերպութիւնը դրական յեղափոխական և ժողովրդի իրական արդիւնքներ խոստացող հիմքի վրա դնելու համար»:

Այդ պայքարի գրական առաջին հետեւանքը պէտք է լինի կեղծ յեղափոխականների արտաքսումը, վտարումը կազմակերպութիւնից, ուր իրանք սուղացել են շնորհիւ միամիտ, կոյր ուսուցիկ քարոզների ենթարկվող միամիտների և կամ թէ իրենց տեսակի բայց աւելի ստորին խաւերին պատկանող հետեւողների շնորհիւ. Ես ապստամբ եմ կազմակերպութեան ներկայ

կացութեան և սխտէմի դէմ, ու իբրև ապստամբ կը շարունակեմ իմ սկսած գործը:

Ես յեղափոխական մարմիններին ընդունում եմ իբրև ժամանակաւոր կառավարութիւն և եթէ այդ կառավարութիւնները հիմնված են կեղծիքի, բռնութեան, լրբութեան վրա և ծառայում են ոչ ժողովրդի իրական շահերին մաքառել պէտք է դրանց դէմ, ինչպէս մաքառում ենք կառավարութիւնների դէմ և աւելի կատաղիօրէն. որովհետեւ յեղափոխական մարմինները ազատութեան դրօշակով են մէջ տեղ եկել:

Ես պահանջում եմ որ հրաւիրվեմ Դաշնակցութեան գերագոյն ատեանին. այդ իմ իրաւացի պահանջն է, ներկայանալ իբրև բմբոստ, կամ ինչպէս կուզենայ իմ փոյթս չէ, և չեմ զիջանի մինչեւ որ ներկայ չը լինիմ Ընդհանուր ժողովին. Իբրև ունեւոր և այլ լակոտ լակուտների կողմից եղած խոչնդոտները այդ պարագային ապացուցում են—որ Դաշնակցութիւնը Յարբրի և Սուլթանների կառավարութեան պէս վախենում է իր մեղադրեալին բացարձակօրէն հանել իր գատարանի առջեւ—որովհետեւ համոզված է թէ իրենք են որ պէտք է դատապարտվեն մեղադրեալի ձեռքով:

Իբրև ունեւոր և զանազան ստորին կարգի մարդկանց յերևանքները, զրպարտութիւնները ոչ մի կերպ չեն կարող փրստել իմ բարոյական պրէստիժին... մանաւանդ գիտակից մարդկանց աչքի առջեւ:

Դրանք Սուլթանական և Յարական բողոստականութեան շահամուտութեան և քծնումի արդիւնք պրպարտութիւններին նըմանող սղեղ գործեր են—արդիւնք ստեղծված սխտէմի և գործի գրուխը գտնվող մարդկանց, և հէնց դրանց դէմ է իմ կռիւը, պայքարը...

ՎԱՐԴՕ

«ՇԱՐՅՈՒՆ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՅԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԳԼՈՒԽ ԻԹ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ԱՆԳԼԻՍ



ԱՆԳԼԻՍՑ ՊԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՈՒԹԻՒՆԻՆԸ

(Շար. Ասխուրի քիւնեմ)

Պէտք է խոստովանիլ որ այս յեղափոխական շարժումը ազգը ցնցեց մէկ կողմէն միւրը : Հայկական սահմաններու մէջ բնակողները ինչպէս նաեւ աշխարհի ամէն կողմ ընկող հայերը այդ ցնցումը զգացին : Ամեն կողմեր այդ շարժումը արձագանք գտաւ ու ողջունեցաւ, մանաւանդ նոր սերունդէն, եւ համաձայնակի պէս տարածուեցաւ ու վարակեց բոլոր սզգը բաղդատար քիչ ժամանակի մէջ : ցնցումներ, ցոյցեր ընդհարումներ ազգը արթնացրին ու ինքն իրեն բերին :

Թիւրք կասափորութեան ապօրէն ընթացքը, սպականեալ վարչութիւնը, կոչառակութիւնը պաշտօնէն չաբարտահարութիւնները արդէն պարարտ հող մը պատրաստած էին յեղափոխական շարժումին, որոնք այդպիսի խլրտուի մը կըսպասէին իրենց մոնղոլական բնազդներուն աւելի կատարեալ յագուրդ տալու : Սուլթանը փոխանակ իր պետութեան առած հին զաստիճան խրատելով իր տունը կարգի դնելու, Հայոց արդար զանգառներուն սողնին առնելով, եւ անոնց զգոհութեան պատճառները վերցնելով յեղափոխութիւն մարել ջանալու, ընդհակառակն ճշնշուով եւ հարստահարութիւնը կրկնապատկելով զայն արժատախիլ ընել երազեց : «Հայուն վերջ տալով Հայկական խնդիրը վերջացնելու որոշեց : Ասիկայ չորհեմը քարուղով մարելու յիմարութեան նման յեղափոխութեան բոցը ամեն կողմ ճարակել տրուաւ, եւ քիչ մնաց Սուլթանը ինչո՞ւ ալ անոր զոհ պիտի երթար : Իրողութիւնը այս է որ Համիտը աւելի յեղափոխական շինեց քան յեղափոխական բոլոր քարոզութիւնները եւ

հրատարակութիւնները : Հայաստանի մէջ, հայկական հողին վրայ, ազգային շարժում մը ոչ միայն կարելի էր այլ պէտք էր որ զիւանագիտութեանն առաջ տեղի առնենար այն՝ զիւանագիտութիւնը շարժելու համար : Ինչ ալ որ ըսուի սակը մնայ ճշմարիտ որ եթէ յեղափոխական շարժումներ երեւան չի գային հայոց մէջ, զիւանագիտութիւնը լոկ ներկայացումներով, բողոքներով, զիմուններով, տրամաբանական փաստերով չէր շարժեր եւ գործուն միջամտութեան ձեռք գտնուէր : Դիւանագիտութիւնը գործնական փաստ կուզէ : Ապրող ու շարժող, զոհողութեան պատրաստ ազգ մը կուզէ տեսնել՝ որպէս զի միջամտի փորձէ : Արդ յեղափոխութեանն առաջ Հայ ազգը այդ կողմերը չէր ներկայացնիր զիւանագիտութեան : Յեղափոխական քարոզիչները որ գործի եւ ատորձանի ալ վերաբերէին : Ինչ պաշտօններն ալ որ ունէին յեղափոխական գործի մանրամասնութեանց վրայ, զայն յառաջ մղելու կերպերուն եւ գործածուելիք միջոցներուն վրայ, ամենէն մեղմ եւ զգոյշներէն մինչեւ ամենէն թունդ եւ յանդուգն յեղափոխականը մէկ կեդրոնական գաղափարի վրայ յամաձայն էին : որ էր սզգը ցնցելով արթնցնել : զայն ստրկութեան ճակատագրին անպայման համակերպութեանն ազգային ինքնաձայնակութեան բերելու : Այս մասին ամէնքը համաձայն էին եւ ազգն ալ իրենց հետ միաբան ոմանք յայտնի ոմանք լռեցան : Եւ այսպէս ամէն ոք իւր տեսակէտէն եւ իր գաղափարին համաձայն քարք բերաւ Հայկական շինուածքին կառուցմանը : Դժգոհներուն անկերպարան գանգուածը կամաց կամաց կազմակերպուեցաւ, իւր գրքեր ճանշնալով միացան եւ գործողութիւններով ու ցոյցերով, որոնք աւալ երբեմն ազգին շատ սուղ նստան, բայց զիւանագիտութիւնը միջամտել ստիպեցին : Ճղուն աչքէն արցունք վազելու է՝ որ մայրը կախ կայ, ազգի մը

երակներէն արիւն հոսելու է որ անգութ զիւանագիտութիւնը շարժի : Հայուն արիւնը արդարեւ գործի մղեց եւրոպական զիւանագիտութիւնը, որուն պատմութիւնը բրինձ հաստի գլխուն մէջ : Բաղդին մէկ անողոք հեզնութիւնն է կարծես որ զիւանագիտութիւնը եւրոպական պետութիւնները : որ իրր թէ խողալու թիւնը պահպանելու համար ամենէն աւելի հակայեղափոխական են, կը դատադարտեն ապստամբութիւնը եւ յեղափոխական ամեն փորձեր, սակայն եւ այնպէս միայն յեղափոխութիւնն է որ զիրենք ի նպաստ տառապեալ ժողովրդոց շարժիլ եւ գործել կը տրամադրէ : կրտսիպէ : Եւրոպայի քաղաքագլուխները ընկճեալ ժողովուրդներուն ձեռք առած օրինաւոր, խողալու րական միջոցներուն, բողոքներուն, աղերսներուն միօրինակ կերպով եւ յամառարար կանխներ գոցելով գանձք քաջալերած եւ հրաւիրած են բուն միջոցներու եւ յեղափոխութեան ձեռք գտնելու : Այսպէս բրած են Յունաստանի համար, Սերպիոյ, Իտալիոյ, Մոնթենեգրոյ, Պուլգարիոյ, Պոսնիոյ եւ կրէպէի համար : այսպէս բրին Գուայի եւ : Յիլիպեան կղզեացի եւ այսպէս կրեն Մակեդոնիայի եւ Հայաստանի համար : Ուստի Հայկական Հարցին բռնած արդի ճամբան բնականը եւ միակ հնարաւորն էր : «Շարժումն ազգային հողին վրայ, հայրենիքի մէջ եւ հայուն կողմէն եւ այդ զոհողութեանց եւ շարժմանց փաստերով զինուած զիւանագիտական կամ ուրիշ կերպ միջամտութիւն» եւրոպական զանազան պետութեանց կողմէն : Արեւելեան հարցին ամբողջ պատմութիւնը զայս կը հաստատէ : Հայկական շարժման նկատմամբ մարդիկ կրնան տարակարծիք գըտնուիլ, գործածուած ամէն միջոցներուն օրինաւորութեանը վրայ կասկածիլ : եւ արդարեւ հնար չէ որ սըխալմունքներ, թերութիւններ, գա


ղափարի անհամաձայնութիւններ տեղի ունեցած չըլլան : Բայց շիտակ չէ ատոր համար, կամ սպասուած արդիւնքը յառաջ եկած չըլլալուն համար, ամբողջ շարժումը դատապարտելի, կամ խիստ քննադատութիւններու մասնի : սկստքը կտորելէն վերջը խորհուրդ տուող, ճամբայ ցուցող շատ կրկնող կրսէ առած : Խիստ քննադատներու խորհուրդներուն՝ կառքը կտորելէն առաջ պէտք կար : Թէեւ առաջագրուած արդիւնքը ամբողջութեամբ ստացուած չէ, սակայն եւ այնպէս ստացուածն ալ անարգելիք բան չէ, Հայկական հարցը քայլ մըն ալ յառաջ գացած է : Ժամանակ մը մինչեւ իսկ լուծման շատ մօտ էր, այնչափ մօտ որ ամէն հայու սիրտը կը տրոփէր եւ անհամբերութեամբ ամեն վայրկեան վերջնական ուրախարի աւետիսի կըսպասէր : Եւ Սուլթանը ինքն ալ մեծ երկ իր զի մասնուած էր : Ասիկայ կը ցուցնէ թէ շարժումը այնչափ ալ յիմարական կամ անողոք չէր, եւ եթէ յաջողութեամբ պատկուէր, այժմու քննադատները ո՞րչափ տարբեր պիտի խօսէին : ոչ միայն շարժումը եւ այդ շարժումին առաջնորդները պիտի չի քննադատէին, այլ նաեւ զանոնք գովելու բաւական բառեր պիտի չի գտնէին, եւ իրենք ալ Եւրոպայի մէջ կամ հայրենիքը այդ շարժումին մէջ գործ մը ունեցած, զիւր մը կատարած ըլլալու պահանջին մէջ իրարու հետ պիտի մրցէին : Գործի մը արժանիքը իր անմիջական յաջողութեանն զատելու չէ :

Ի՞նչ Եւ Լեւեմէն ԿԱՄ ԿՐՈՒՄԻՆԻՔ

Հայկական շարժումին ներկայ անյաջող ելքը եւ յառաջ եկած ջարդերը ամբողջովն ազգային դատին տօմարին կորուստի կողմը գրելու չենք : Անոնք երկրորդին ցանած սերունդն կը համապատասխանեն, որոնք օր մը շահ մը, արդիւնք եւ հունձք մը պիտի տան : Հիմա հայուն ցանելու ժամանակն է, արիւն ու խօսք կը ցա


ՍԷՍԻԼԻԱ Ս. ՊԼԷՅՔ

Գ Է Ք Ի



Հայկական Ռոման մը

(Թարգմանութիւն Անգլիերէնէ)



ԳԼ. 2.

«Ս' Է Լ' ԱՄՈՒՐ»

— Ճիշդ այդպէս է, Միքէ : Այս իմ կեանքին է՛ն երձանիկ օրն է : — Թո՞ղ իմ աչքս ու Դէֆիս այսպէս շատ օրեր վաշիւն, ըսաւ Միքէ պատկանանքով, զլուրը խոնարհած : Գիտի՞նք թէ մեզ համար կազմութիւն, ու մենք ալ գլխորդինք—ն՝ Ամէն : Մինչդեռ սուրճերն ինչ կը խմէինք եւ ես իմ արթնաճամ ուտելիքներս կուտէի, զորս Սիւլթան իր հիւանդներուն ու վիրաւորներուն համար ամբարած էր, ինք այն կարծր պաք սիմաւոնի կուտէր, որոնք իւր առաջարկութեամբ Միքէն բերած էր հայէն, ու կատարելապէս սպարդիւն էին համոզումներս ուրիշ բան մը կերցնելու համար : — Դէֆիս, քեզ կը վստահեցնեմ որ շատ գեղեցիկ են : Եթէ

այդ նազոյն շրթունքներու մէջ տեղը շարուած մարգարիտները կտորտուելու վախը չըլլար, պիտի առաջարկէի որ դուն ալ ճաշակէիր զանոնք : Բայց գիտես թէ զինուոր մը զժուարութեանց տոկալու է : Իմ հայերս ինչ որ կուտեն եւ ալ միեւնոյնը կուտեն, — ո՞չ աւելի լաւ : Բայց, կը սխալիմ, այս սուրճը լաւագոյն է : սակայն այդ ալ Միքէի ճարտարութեան շնորհիւ : Խահուէն միեւնոյնն է : Ասիկա մարդուն սիրտը զուարթացնող ըլլալի յէ, Միքէի կենացը կը խմեմ, ինչպէս կըսեն արեւմտեան երկրներում : — Ուրեմն ճամբորդած ես, Սիւլթան, հարցուցի : — Այո, թագուհիս երբ տակաւին պատանի էի : Երկուքս ալ խնդացինք : Այո, ճիշդ է : Շատ տարիներ առաջ նախ քան Պոստի զինուորական զրաբոցը մտնելու, հայս ուզեց որ արեւմտեան քաղաքակրթութիւնը տեսնեմ, եւ ծանօթանամ : Հայս հարուստ մարդ մ'էր : Գացի Յունաստան Հոգով, Փարիզ եւ Լոնտօն : Վերջոյն մէջ բաւական երկար ատեն մնացի : Չափազանց կատարողեցայ ժողովրդին վայելած կատարեալ ազատութեանն : Եւ անուր բողոքեցաւ : «Ա՛հ, եթէ իմ երկիրս ալ այսպէս ըլլար», հաստատեց իր Լոնտօն էի, շատ մը երիտա-

սարդ հայրենակիցներու հանգիպեցայ—բոլորս ալ միեւնոյն ոգուով շընչելով Ազատութեան օգը եւ սովորելով Ազատութեան դասերը Անոր նուիրական երկրագոյնները եղանք : Ուրտեցինք մեր գործունէութիւնը, մեր հարստութիւնը, մեր կեանքը : Եթէ հարկ ըլլալ, սուրբ գործին նուիրել մասնաւորապէս մեր ստեղծութիւնը : Գարձած երկրին մէջ, որովհետեւ, գիտցած ըլլաւ, Դէֆիս, որ թէպէտ Սուլթանը տակաւին սպանութեանց եւ կոտորածներու զժոխային ողիւնները չէ արձակած իր գեղեցիկ վիլայիթներու մէջ, սակայն անոնք ալ ասնաստոր բունութիւններէ եւ ճշնուներէ ազատ չեն : Հարուստ ըլլալ զիւանակի փառայի մը գոհը ըլլալ կը նը շանակէ : Արդարութիւն ընել եւ ճշմարիտը խօսիլ կեանքի օրերով համարել թեւէ : Իմնտարութիւնը, աքսոր, գլխատուած, ամէն բոլոր պատրաստ կապանն : Այս է իմ Թուրքիոս, սիրուն Դէֆիս : Դուն գիտես թէ ի՞նչ է Հայաստանը : — Ո՛չ, ըսի տխրութեամբ, ես միայն Հայաստանի անցելով գիտեմ գրեթէ : Հայս ամեն զրուցութիւն ի գործ դրած էր անոր ներկայ կացութեան անգիտակ պահելու : Չե՞ս յիշեր թէ՛ ըսի քեզ որ մեր պատուի պարտապնդեանն գուր չէի ելած երբէք

մինչեւ այն օրը, երբ... — Իմ ազաւնիս Սիւլթանի թեւերուն մէջ սլացաւ, ո՞վ Դէֆիս : Բայց ես իմ սիրելիս կը յոգնեցնեմ, վրայ բերաւ : — Ո՛չ, ո՛չ, ըսի, կը սիրեմ մտիկ ընել—գիտնալ—ինչ որ Սիւլթանս կըսէ : Ժպտեցաւ, համբուրեց զիս ու շարունակեց—«Տեսերկու հօգի էինք : Սրբազան զաշինք մը կըքցեցինք, որ իւր քանչիւր իր արեւմտ ստորագրեց, երայխաւորելով ինքզինքը, ամեն զնով բարձր պահել Ազատութեան գործը, եւ մեր գարեթէ իկեր հարստահարիչներու լուծին եւ բունակալներուն ձգտելին տակ չե՞ծող երկիրը փրկել : Այդ պատմագրութիւնը, որ ընդգծած ու մեր արիւնով ստորագրած է ինք, անուանեցինք «Սիւլթանարդ» : Թիւրքիոս սրբազան զաշինքս : Այն ատեն, գրեթէ եթէ տարի առաջ, միմիայն տասերկու խանգալաւ հողիներ կային : այժմ անգամները կրնան հազարներով համարուիլ : Եւրոպայի բոլոր շնանաւոր մայրաքաղաքներուն, ինչպէս եւ Կ. Պօլսոյ մէջ ցրուած են անոնք : ակնկառոյց, աչալուրջ ու գործօն : մինչեւ որ ժամը հնչէ—մինչեւ որ Ինտութեան մահազանգը զօղանչէ : Ողբերուած խանգով մը զէմքը

նենք, առանց որուն հունձքը անհնար է, Իրաւ է թէ հայը դարերէ ի վեր արիւն թափած է, գոցէ աւելի արցունք քան արիւն բայց այդ ստրկութեան մէջ եւ ստրկութեան թափուած արիւն էր, Ազատութեան համար արիւն թափել նոր սկսուաւ Հայը, որ անշուշտ իր հունձքը պիտի ունենայ, բայց ոչ ոմանց կարծածին չափ շուտ, եւ արեւն հիմա ալ այնպիսի ուրախութիւն երեւոյթներ յառաջ գալ սկսած են, որ Հայկական Դատով ամեն հետաքրքրուողին ուշադրութեան արժանի են: Մենք մի քանի կը յիշենք, եւ ամեն մէկը իր հասկացածին համեմատ կրնայ երկարել այս ցանկը:

1. Հայկական շարժումին եւ նոյնիսկ ջարդերուն, յառաջ բերած մեծագոյն կարեւորութիւն ունեցող կէտը «բազմակիսն է», եւ րոպական մեծ պետութեան եւ ժողովրդի մը յայտնասպառ եւ ազգու կերպով Հայկական խնդրոյն մէջ մտնել եւ հայոց նպատակներ, հայոց պաշտպանի դերը բռնելն է: Անպիտոյ պատեր խնդրոյ տակ է մեր դատին մէջ, ինչպէս տեսանք նախորդ յօդուածին մէջ: ասոր կարեւորութեան վրայ շարժելն աւելի չենք կրնար ծանրանալ:

Ասիական ըսողը միայն չայ մը չէ, բոլոր անպիտոյքը, որ կուսակցութեան ալ պատկանին, այսպէս կը դրան եւ այսպէս կը տեսնուի: Իրենց ազգային պատեր մեզի համար ոտքի տակ առնուած է, ասիական բաւական գրաւական մըն է որ նաեւ մեզի համար, այդ պատերը շտկել պիտի չանայ Անգլոյն:

Երանի՛ թէ, սակայն, կարենալինք այնչափ զգոյշ վարուիլ որ առիթ չը տայինք Անգլոյն մեր ու եւ արարքին համար պայծակ դեմ կամ իր պատուոյն մեզմով ալ արատաւորութեան վտանգ տեսնուի: Այլ ալ միւս կողմէն, ու եւ կերպով ընդհանուր եւրոպոյն մէջ Հայոց նպատակներ եւ բարեկամական զգացումները վերադարձնելով ընթացքի մէջ գտնուելինք: այս մասին արտասահմանի

Հայոց վրայ մեծ պատասխանատուութիւն կը ծանրանայ:

2. Չարդերուն շարժումն է որ Հայկական շարժումը այսչափ մտաւն եւ այսչափ սուր հանգամանքի տակ զգան չըցուեցաւ: Եւրոպայէն, որ շատ ակախաւոր անձնաւորութիւններ հայոց նպատակներ եւ համակիր գիրք մը լսեցին, որ ընդհանուր ժողովուրդը հայուն վրայ սեղեկութիւն ստացաւ, անոր վրայ ուշադրութիւն դարձուց: Հայուն ով ըլլալը, անոր յատկութիւնները, կարողութիւնը, ձգտումները եւ այլն հակոցաւ եւ զընդհանուր, անոր պատմութիւնը եւ երկիրը ուսումնասիրեց: Աստուք ժողովրդի մը ազատագրութեան ճամբուն վրայ շատ կարեւոր քայլեր են, զորս մէկ երկու դարու մէջ հազիւ թէ կը կարողանայինք առնել խաղաղասիրական միջոցներով: մասնաւոր մեզի պէս անձանքով: Ասիոյ մէկ անկունը կը զգրուած, Եւրոպոյն հետ ոչ մի կապ ունեցող ժողովուրդի մը համար այս ճանչցուելու հարկը անհրաժեշտ է: Մինչեւ հիմա Թուրքիոյ լուծելն ազատագրուող ամեն ազգեր կամ Եւրոպոյն մէջն էին կամ կիճը եւ ճանչցուած Թոյններ իրենց փառաւոր անցեալովը ծանօթ էին Եւրոպոյն եւ ասիոյն: Յունարէնը ամէն բարձր դրոշմներու մէջ կուսուցուէր, քիչ թէ շատ կրթութիւն ստացած մէկը Յունական գրականութեամբ սնած էր: ուստի եւ քնական էր որ համակրէին անոր: նաեւ Թոյնները Եւրոպոյն մտը եւ ծովային ժողովուրդ մը ըլլալով իրենց նաեւրու եւ վաճառականութեան միջոցով Եւրոպոյն հետ աւելնողաւ յարաբերութեան մէջ էին: ինչ որ չէր Հայոց պարագան:

(Շարունակելի)


փայլեցաւ: Գանի մը րոպէ լուս իրեն նայեցայ: Սիւլէյմանի զեմքը իր Դէֆիին համար հրեշտակի մը երեսն էր: — Ու ինչ եղան միւս տասերկու քր, հարցուցի:

— Ես վեցէն մէկն եմ Հայաստանի մէջ, պատասխանեց ան, որոնց իւրաքանչիւրն ալ իմիմիո նման հայրենասէրներու պարիկ խուճք մը կը կրթէ ու կը մարդէ: Մեր գործունէութիւնը մեծ գաղտնապահութեան ներքեւ է. և ինչպէս կը տեսնուի, լեռներու մէջ պահուած կը մնանք: Գանի որ մենք փոքրամասնութիւն ենք, կը բաւականանանք վտանգ սպաննացող վերջնական շահագրգռեալներով ու ի հարկին ծներու, կիներու և հրեիսաներու վրայ ի գործ զրուած հարածանքներուն և լեռնօթիւններու վրէժը լուծելով, եթէ անք, սակայն, տակաւին, հարկագրուած ենք մեկուսացած գրութեան մը մէջ մնալ: քանի որ անգոր ենք վայրագ քերտներու և թիւրք գիւնուորդներու հետ ճակատ սո ճակատ գալու: Եւրոպեաներ հնազանդ կը միանան մեզ և երբ ժամանակը գալ, որ կը հաւատամ թէ հետեւ չէ, այնպիսի հարուած մը պիտի տանք այդ նախնիքի, ջարդի և բռնաբարութեան դիւանդարներուն: որ աչխարն ալ պիտի գիտնայ թէ Աստուած մը կը թագաւորէ:

— Եւ միւս վեցը, ո՞վ իմ Սիւլէյմանս:

Անհանգիստ կերպով շարժեցաւ, խոր հառաչ մը հանեց ու ապա յարեց: — Անոնք իրենց կանքը ճշմարտութեան համար զոհեցին. ա՛նոնք, թէպէտեւ առանց մեծապէս համարաւերու, միացան Ազատութեան անաքեալներու հսկայ բանակին: Թէպէտեւ անոնց հանգստաբանը վստփորի կապոյտ ջրերով ծածկուած է, սակայն յիշատակը միշտ թարմ ու զաւրց պիտի մնայ հայրենասէրներու սրտում: Այո՛, շարունակեց ան, որպէս թէ ինձ մտոցած՝ անցեալին մէջ կապրէր, այն միևնոյն գիշերը, որ միստիքական ազգաբարութիւն մը ստանալով՝ յաջողեցայ հրաշքով մը փախչիլ: անայտ մեր «Երիտասարդ թիւրքերու» է՛ն փայլուն զեմքէն Արեգը: Սէլիմը և Էտեմը գլխատուած, ու միւս երեքը զրկուած էին թիւրք մը մէջ իրենց ծաղիկ հասակը փակցնելու համար: Ո՛հ, Աստուած, հոգիս վրէժ կը գոռայ: Երանի՛ թէ անոնց հետ մեռնէի... Եթէ կար պիտարակիւ արարք մը, այդ ալ իմ էր: Այնքան լեցուած էի, ինչպէս բռնապետները կը կոչեն խոտովարայի հոգեով որ ամեն ինչ յարուար ու անյարմար խոսեցայ բացարձակ ու պարզօրէն: Իրենց առաջնորդն էի ու

ԹԷ ԳԵՐՄԱՆ Ը ՔՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՆՉՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ԲԻՐՈՒԹՅԱՆ ԶՐ.Պ.Ր.ԿԻՆ



Այս յօդուածի Ա. մասը գոր հրատարակած է ինք թիւ 4-ի գաղտնիութիւնը 2675 ի մէջ, գրաքննիչի ինչ ինչ առարկութեանց մասին, յօդուածի Բ. մասը անփոփոխ հրատարակել անկարելի ըլլալով ինչպէս խոստացած էի, նոյն յօդուածի շարունակութիւնը ինքնուրու հասարակութեան կը պարզեմ «Երաժշտ»-ի միջոցաւ:

Տակաւին 20-30 տարիներ առաջ ճարտարագործութեան վաճառանոցը սահմանափակուելով, ամբողջապէս Անգլիոյ մենաշնորհը եղած էր, խորոյտ Անգլոն էր որ փոխադրութեան ամեն զիրամատչելի միջոցներ իր ձեռքը անցունելով արարատ աշխարհի պէտքերը կը մատակարարէր, ամեն երկրի ամեն տեսակ ապրանքներ մեծ խելքով նախ Անգլիա եւ ապա անկէ աշխարհի ամեն ծայրերը կը հասցնէր, ուրեւի վաճառականութեան հայթայթիւն էր:

Ասոր հակառակ իր Անգլո-Սագսոն ցեղակից Գերմանիան... տակաւ ծաւալելով եւ տնտեսապէս զարգանալով ճարտարագործութիւնը ինչպէս որչին հոն ալ իր պատրաստ հողը գտաւ եւ շատ շուտ առաջ ընթանալով իր հոսանքին ներքեւ խաղաղեց շատ մը արուեստաւոր եւ հողագործ դասակարգեր, որոնք աստիճանաբար ինչպէս մեքենաներու ճիւղներու ներքեւ, որով շատցաւ սեփականագործի գործաւոր դասակարգը, հետեւաբար երթալով գործաւորներու տնտեսական վիճակն ալ ինչպէս, այնպէս որ գերման ժողովուրդը օրէ օր անկարող դարձաւ իր իսկ արտադրութիւնը ամբողջապէս սպառելու: Ուստի երբ այսպէս տարիներու ընթացքին մէջ տակաւ թուլացաւ Գերմանիոյ տնտեսական դրութիւնը, այն ատեն գեր-

ման դրամատէրները ստիպուեցան իրենց այլը զօրծնել զէպի արտասահման եւ աշխատեցան իրենց երկրի սահմանէն դուրս օտար վաճառանոցներ որոնել:

Այսպէս ուրեմն գերման դրամատէրները մտնելով նոր շահաստաններու մէջ կը մղուէին անհաւատար մրցումի մտնել, արդէն հոն գոյութիւն ունեցող իրենց առեւտրական օտար հակառակորդներու հետ, թէ ինչ միջոցներ ընտրեցին իրենց մրցումին համար անա բուն իրենց ճարտարութիւնը (Ինչպէս զարուսթիւնը) ասոր մէջն էր, իրենք, անկարող ըլլալով կեղծական Եւրոպոյնի մէջ մրցիլ իրենց իմիթասիօն ապրանքներովը, տարածուեցան եւ սկսան ժրջան գործունէութիւն մը, այն տեսակ երկիրներու մէջ, որոնք տակաւին կոչուեցան կոչիւր ճարտարագործութեան առջեւ, բայց այս տեղերն ալ շատ շուտ դուրս եկաւ գերմանական ապրանքներու կեղծ գոյութիւնը, ուստի եւ զժողովրդեանց բազմիչ սկսան, հաւայն ատեն գերման գործարանատէրերը զիմեցին հրէական հնարամտութեան եւ սկսան անհամեմատ զիրութիւններ տալ ամեն կարգի վաճառականներու, այլ եւս իրենց համար տարբերութիւն չունէր, ոչ մեծ գրամատէրը եւ ոչ փոքր խանութպանը հաւասարապէս ապրանք բաժնելու սկսան, այն տեսակ պայմաններով որոնց ոչ անպիտան վեհանախնդրութիւնը եւ ոչ Ֆրանսական ազնուութիւնը պիտի զիջանէր: Գերման անկարողութիւնը այս շահագէտները ուրեմն ընտրեցին վաճառականութեան ոչ պատուաբեր միջոցները որով եւ կարող եղան օրէ օր ներմուծել ու սպառել իրենց ապրանքները, ի գերութիւն կամ ի վնաս անորա. մազուի վաճառականներու, այնպէս որ տարուէ տարի ամէն ամիս միլե. բանոցները լեցուեցան զուտ գերմանական ապրանքներով որովհետեւ անգլիականը այլեւս անմատչելի կը դառնար մեր իրապէս «անտէթայիսթ» սակայն անուանապէս «անկրօսիստ»

ԳԼ. Է.

«Ո՞Վ Է ԳՐՕԳՈՆ»

Յաջորդ առաւօտ արշալոյսին, երբ հայերը իրենց գիշերային արշաւանքէն վերադարձան, Միքէ. ինչպէս որ նախապէս կարգադրուած էր, իր հայուն հետ ճամբայ ելաւ տուն վերագառնալու համար: Անք բաժանումի վերջին րոպէն խիտ կարճատեւ եղաւ, սակայն ասոր փոխարէն կէս գիշերին ամբողջ ժամեր անցուցած էինք շատ մը սիրալիր խօսքերով ու բաժանումի գորովալիք գրկեցիստանութեան յիմ Դէֆիս այլեւս առանց Միքէին կարող է մնալ, ըսաւ էն: Մեղադրանքի շեշտ չկար իր ձայնին մէջ—իմ երջանկութիւնս իրն ալ էր—սակայն խօսուածքին զերբեքս ճշմարտութիւնը ուղղակի արտիս զնաց, վասնզի իրապէս ճշմարտութիւն մ'էր այդ: Սիւլէյման հիմա ինձ համարրո վանդակ աշխարհը կարծէր, իմ կեանքս իրենին մէջ կորսուած էր: Երբ Միքէն ալ հիմա մասնակից եղած էր այն ճակատագրին, որ վիճակուած է հայրերու, մայրերու, երբ գերագոյն րոպէն կը հասնի, երբ Մէրը երկու սիրատարի սրտեր ամուր կապերով իրար կը միացնէ և ուրիշ ամեն ինչ վտարելով իրար կը փարէ:

(Շարունակելի)

չատ մը վաճառականներուն. անգղիական ոչ մէկ գործարանատէր կրնա զուտի աշխարհ փոքրաքանակ յանձնարարութիւններ աշխարհ երկար պայմանաժամերով անոնք յանձնարարութիւն կտտանան պայմանով որ ըլլան մեծաքանակ եւ վճարումները աշխարհ կարծ պայմանաժամով որ գրեթէ կանխիկ ուստի անգղիական ապրանքներ կրնան բերել միմիայն այն վաճառականները որոնք նիւթապէս առաւելութիւններ ունին:

Անգլիական գործակատարներ (ակէնթ) երբէք մեր հրապարակին վրայ չըջնելով յանձնարարութիւն չեն մուրներ, բայց հոս ամեն օր տասնեակներով գերման ագոմիսիօններէ պայուսակի ձեռքին, պոնտու Մոնսիօրը քանով կը մտնեն որ զուտը որ բաց գտնեն իրենց առջեւ, եւ կսկսեն պաշտատարին խնդրել որ գէթ 100 մարքի յանձնարարութիւն մը տաս, մինչդեռ թէ Անգլիայի մը ըլլար 400 սգէրլինի ալ չը պիտի գիշարէր մարք կապի ու կը մնայ թէ այսքան ինկած միջոցներով ապրանք սպառելու վաճառականութիւնը ինչ յարգ պիտի ունենայ եւ մինչեւ երբ պիտի կրնայ պահել իր բռնազրօսիկ յառաջդիմութիւնները. եւ տակաւին մեր վաճառականները տեղի տալով այդ գնում հոսանքին, կուզեն Պուլկայի մէջ իրենց չըջնեն գործակատարները արդիւն մինչդեռ այդ հրէածին գերման Գ. Բոմպարտները մեր շուրջը վիտաւով, մեր աչքին առջեւ մեր հացը կը յափշտակեն:

Ինքնաշարժ շահագէտները սկսան իրենց ապրանքները մեծաքանակ ներմուծել ի գերմանիայէ կամ ի վիսսա անդրամազուրի վաճառականներու, ըստ ի վիսսա որովհետեւ ամեն գրամատէր կ'աճապարէ ունենալ անքան շատ ապրանք որքան որ կարող է որովհետեւ որքան շատ ապրանք այնքան շատ շահ կ'ապրանք. ուստի եւ միջերանցները կսկսին լեցուիլ, բայց երբ ժամանակը կուգայ վճարելու, այն ատեն ապրանքներ կան միայն եւ ոչ դրամ, ահա այն ժամանակ է որ անկուսը կը հասնի, եւ այսպէս իրար օչակուած ըլլալով մէկ անանկութիւնը միմիայն կը յաջորդէ եւ յառաջ կուգայ ընդհանուր տագնապը, այս պարագային ծայրահեղ վտանգութիւնը կը փոխուի ծայրահեղ երկրաշարժի որովհետեւ վիսսա ընդհանուր կըլլայ. եւ այսօր այս իսկ յիշատակած պատճառներով է որ աւելի մեծ չափով եւ ծանր անանկութիւններ կը պատահին, որոնց կենդանի օրինակները զեռ շատ թարմ են մեր աչքի առջեւ, ինչպէս եւ Ռուսոնի միջոցներով հոչակուած սնանկութիւնները:

Այս բոլոր փաստերու հիման վրայ ուրեմն կրնանք ըսել թէ գերման գրամատէրներու ընտրած եւ մեր հրապարակի շատ մը վաճառականներու որդեգրած այս կարգի առեւտրական միջոցները վաճառականութեան վարկը կը նուստացնեն քան թէ կը բարձրացնեն. ահա թէ Գերման ծարտարարուեստը ինչպէս տիրեց կամաւ եւս մրտոնց մեր առեւտրական հրապարակը:

ՄԿՐՏԻՉ ԱՐԳԱՐԱՆ

Յ ի լ ի պ է

### ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

(Շար. Ասխորի քիւիկ եւ վերջ)

Երկու կողմի շրջադրներն ալ կը պատրաստուին մեկնել իրենց երկիրները:

Պատու Գոմուրա իր մնաք-բարովին մէջ, զոր կը պատրուակէ տեղական թերթ մը, այսպէս կըսէ.

Մենք կ'առեցանք պահպանելու համար ոչ միայն պատիւն ու արժանապատուութիւնը, այլ նաեւ խաղաղութիւնն ու յառաջդիմութիւնը Արեւելքի մէջ Արդարութեան ոգին միջի հետէր, մենք ներշնչուած էինք մեր առջեւ գտնուող գործին վսեմութենէն: Մենք բոլորս միացած, եղբայրներու ժողովուրդ մը, պիտի չը վարանէինք ու պիտի չը հարգէինք մինչեւ որ մեծ նպատակը իրագործուի: Եթէ ճարտը անցեալին մէջ հանգուլթած է իր իրաւունքներն և արժանապատուութիւնը բռնաբարուածին, առիկա անոր համար էր որովհետեւ ան պիտակից չէր որ ուժին ճարտը իր խաղաղատէր ժողովուրդը աւելիչ պատերազմին մղելէ առաջ պայծառ ակնարկով մը կը շնչէր պատասխանատուութիւնը: Հիմա սակայն մենք խաղաղութիւն առինք և մեր ժողովուրդը ուրախութեամբ կը ընդունի զայն, որովհետեւ անոր համար աւելի ահեղ փափաք մը չի կայ քան խաղաղութեան և բարեկամութեան մէջ ապրել բոլոր այն ազգերուն հետ, որոնք կը յարգեն իր պատիւն ու անկախութիւնը:

Խաղաղութեան զանազակը 15 յօդուածներէ կը բաղկանայ. որուն ամփոփումն է շեռեւեակը:

Յօդ. 1. — Մշակչական խաղաղութիւնն ու բարեկամութիւնը հաստատուած է Ռուս և ճարտը ազգերուն միջեւ:

Յօդ. 2. — Ռուսիա կը ճանչնայ և կը ընդունի ճարտը գերիշխանութիւնը Գորէլայի վրայ:

Յօդ. 3. — Ռուսիա և ճարտը կը համաձայնին ջարտելի Մանչուրիայէն Մանչուրիան Չինաստանի պիտի մնայ բաց-զուտով:

Յօդ. 4. — Ռուսիա կը համաձայնի ճարտը փոխանակել Լիւսթուրնի թերակղզին, Բորթ Արթուրը, Տալին, և կղզիները, զորս Ռուսիա Չինաստանէն վարձած էր Չին-ճարտական պատերազմէ վերջը. և որոնց պայմանաժամը պիտի տեւէ 90 տարի եւս:

Յօդ. 5. — Ռուսիա կը համաձայնի ու եւ պատրուակի կամ ձեռք տակ ոտնձգութիւններ չի գործել ապագային Մանչուրիայի մէջ:

Յօդ. 6. — Ռուսիա կը համաձայնի ճարտը ձգել Գլանկ-Չէնցէն Բորթ Արթուր և Տալին եւլն. երկաթուղիի գծեր:

Յօդ. 7-8. — ճարտը կը համաձայնի Չինաստանի թողուլ իրաւունքներ որոնց վրայ համաձայնուած է Ռուսիայ երկաթուղիներու շինութեան ատեն:

Յօդ. 9. — Ռուսիա կը համաձայնի ճարտը թողուլ Սախալին կղզիին հարաւային մասը:

Յօդ. 10. — Ռուսիա եւ ճարտը կը համաձայնին ամբողջութեամբ չի կառուցանել Գորէլայի ու եւ մէկ մասին վրայ:

Յօդ. 11. — Ռուսիա կը համաձայնի ճարտը տալ հաւասար իրաւունքներ

Սիպերիոյ շրջերուն մէջ ձկնորսութեան:

Յօդ. 12. — Վաճառականական գաշնագրութիւն մը Ռուսիոյ եւ ճարտը միջեւ:

Յօդ. 13. — Ռուսիա եւ ճարտը կը համաձայնին փոխադարձաբար վճարել պատերազմական գերիներու ծախքերը. կամ թէ, Ռուսիա կը համաձայնի վճարել տարբերութիւնը (քանի որ ճարտը ծախքը աւելի մեծ եղած է գերիներու համեմատութեամբ):

Յօդ. 14. — Օրէնքներ ճարտը հիւպատուներուն վերաբերեալ Սիպերիոյ մէջ:

Յօդ. 15. — Ֆրանսական եւ Ամերիկեան զեպպանները յիջնորդներ պիտի ըլլան Ռուսիոյ եւ ճարտը միջեւ:

Յ. ՆՈՐՄԻԿԱՆ

Պօսթօն

Ստացած ենք մի կողմ մի քանի հայերի ստորագրութեամբ, որը կը ապագրենք յաջորդ համարում:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Շուտով Մակեդոնիոյ համար նշանակուած Եւրոպացի քօնթրօլօրները պիտի հասնին Սէլա. նիք: Խուրք կառավարութիւնը զեռ իր համաձայնութիւնը տուած չէ զանոնք ընդունելու համար և կը յամառի:

— Չերբակալութիւնները Պուսոյ մէջ կը շարունակուին. ձերբակալուողներուն մեծ մասը հայեր են: Հայաստանի նահանգներէն խժոճութեան մասին լուրեր կը պակսին:

Թ Ո Ւ Ս Ի Ա

Արթիկ խնդրած է որ իր Բեթերսպուրկ վերադարձին ու եւ համակրական ցոյցեր և պաշտօնական ընդունելութիւն տեղի չունենայ:

— Գրաքննութիւնը պիտի առնուի ներքին գործոց նախարարութեան ձեռքէն և բոլորովին անկախ վարչութիւն մը պիտ հիմնուի: Այդ նոր կարգադրութեան համաձայն բոլոր թերթերը նախնական գրաքննութենէն ազատ պիտի մնան. թերթերու գէմ գաղտնաբարութիւնները պիտի ըլլան միայն այդ նոր վարչութեան կողմէն:

— Պաքու 10000 նոր զրկուած է քաղաքը հանգստացնելու համար: Պաքուէն, Շուշիէն և այլ վտանգուած տեղերէ հայերը կը թափուին Թիֆլիզ, Թշուառն, րուն քանակ խիստ մեծ է:

— Կովկասեան բոլոր հայաբնակ քաղաքներու մէջ սկսած են հայ զարդակական հողաբարձութիւններու ընտրութիւնը:

— Վեհափառ կաթողիկոսը որոշած է կրկին Թիֆլիզ վերադառնալ փոխարքային հետ աւն:

Ճամբ տեսնուելու հայկական վերջին պատու հասնելուն առթիւ:

— Ռուս ազատական մամուլը խիստ գիրք բռնած է զէպի կովկասեան նախկին կտտալտորիչները, որոնց մեղաւոր կը գտնայ ներկայ թուրք հայ ընդհարումներու առաջաջման մէջ:

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՃԱՐՈՆԱԿԱՆ

14 սեպտեմբերին Լոնտօնէն կը հեռագրեն հետեւեալը. Անգլո-ճարտական զաշնագրութիւնը ընդունուեցաւ մեծ հրճուանքով. մամուլը միաձայն կը շնորհատէ կառավարութիւնը իր վճիռներուն համարձակութեամբ համար և կը պնդէ թէ այդ զաշնագրութիւնը ամենէն քիչը տասը տարի մամանակով պիտի ապահովցնէ Ասիոյ մէջ խաղաղութիւնը: Բոլոր թերթերը կը նկատեն որ զաշնագրութիւնը ամենին չի դիպչիր Ֆրանսայի մասնաւոր շահերուն և կը յուսան որ վերջ պիտի տայ Գերմանիոյ անձնասիրական ձգտումներուն Չինաստանի մէջ:

— Խօքիօյէ նոյն թուականին կը հեռագրեն թէ Անկլո-ճանական զաշնագրութիւնը հոս գոհունակութեամբ ընդունուեցաւ. Այնու ամենայնիւ Հնդկաստանին վերաբերեալ մասը քանի մը չըջնակներու մէջ լաւ տպաւորութիւն չը թողուց:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնքի քաղաքական քննութիւնը հաստատած է որ հայերը ուղեւորները պատրաստած են զուրս զրկելու համար. Աթէնքի մէջ ու է փորձ ընելու միտք չեն ունեցած:

(Վա'յ ապուշներ, հայերը Աթէնքի մէջ ի՞նչու փորձ պիտի ընէին: Մ. Խ.):

ՍՐԱՀ ՍՍԷՏԻՆԷՆԻԷ

— Մնաք բարեաւ, վերջին երեկոյթ —

Սեպտ. 18 կիրակէ գիշեր վերջին անգամ ըլլալով Հայ գերխմբի կողմէն պիտի ներկայացուի առաջնորդութեամբ պ. Վ. Պապեանի առաջին անգամ ըլլալով Արիւստի ՈՐՍՈՐԳԸ միմտարած 4 արարուած. Երգեր և պարեր Օրդ. Օլկայի և կատակերգու Հաճի Բակորին կողմէն. Սօֆիա իշխանական թատեր. խմբին առաջին կարգի դերասաններէն պ. Թօնէֆ պիտի մեծախօսէ պուլկարերէն լեզուա:

Հ Ա Յ Ե Ր Ը

Իրենց արդի ահաւի կացութեանը մէջ Վ Ղ Ո Ւ Կ Ը

Թատերախաղ Յարար և 1 պատկեր